

ՏԱՄՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովը Նամակ Ս. Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնները. Արտաքին լուրեր.—ՆԵՌՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ԺՈՂՈՎ

Կիրակի, ամսիս 26-ին, քաղաքային տան դահլիճում կայացաւ հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովը: Ներկայ էին ինն անդամ: Ժողովին նախագահեց պ. Թաւադեան: Ժողովի պարագլուխը գլխավոր նիւթերն էին.—լրացած տարվայ գործունէութեան և հաշի տեղեկագիրը, ընթերցումը և հաստատութիւնը, պաշտօնատար մի քանի անձանց ընտրութիւնը, և 1887 թվի նախահաշի հաստատութիւնը: Ամենից առաջ վարչութեան կողմից առաջարկվեցաւ Կաթողիկոսին ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել, այդ մասին նախօրոք տեղեկութիւն տալով: Ընդհանուր ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը: Դրանից յետոյ քարտուղարը կարգաւ 1885 թվի գործունէութեան և հաշիների տեղեկագիրը: Ներկայ ընդհանուր ժողովին երկար զբաղեցրեց նախօրոք մի ընդհանուր ժողովի վճիռը, այն է, որ ընկերութեան իւրաքանչիւր տարեկան անդամ կը ստանայ իր անդամակցութեան միջոցին հրատարակված գրքերից մի-մի օրինակ: Այդ բանը սկզբունքով վճարված է, և ընդհանուր ժողովը հարկաւոր չը համարեց այդ սկզբունքը փոխելով: Ընկերութեան տարածվելուն, կամ անդամների շատանալուն կը նըպաստի այդ օրոշումը, թէ ոչ, պահարակելի է այդ, թէ օգտակար,—այդ մի և նոյն է. ինչ մարդուց բաղկացած ընդհանուր ժողովը հարկաւոր սեպեց այդ սկզբունքը ընդունել, և օրոշել միայն այդ սկզբունքի գործադրութեան ձևը: Անհատականաւ է, թէ ինչ հիման վրա մի քանի անդամներ

առաջարկեցին որ ընկերութեան հրատարակված գրքերից տրուին և այն անձանց, որոնք անդամ են եղել նախ քան այդ վճիռի կայանալը: Տարազգաբար այդ միտքը չընդունվեցաւ: Վարչութիւնը առաջարկում է հրատարակված գրքերը տալ անդամ գրողներին: Այդ մասին երկար վիճաբանութիւն է ծագում, և այդ ոչ թէ այն պատճառով, որ խնդիրը, ըստ պօսեցոյց, «ծանրակշիւ և յոյժ խճճեալ էր», այլ որովհետև ժողովը վերին աստիճանի «ընտանեկան» բնուրուութիւն ունէր, և հարցը քուէարկութեան ենթարկելուց յետոյ իսկ դժուարութիւն էր առաջ դալիս որոշելու թէ արդեօք ուղղորդեն են չորս հոգի, թէ չուղղորդեն են հինգ հոգի... Մի քանի տեսակ առաջարկութիւններ եղան յիշած սկզբունքի գործադրութեան ձևի համար. վերջնապէս վճարվեցաւ իւրաքանչիւր անդամին տալ նորա անդամակցութեան ժամանակ հրատարակված գրքերից ոչ աւելի քան վեց րուբլու (անդամակցական վճարը վեց րուբլ է) և գրքերի ընտրութիւնը թողնել վարչութեանը: Ընդհանուր ժողովը ընդունեց և հաստատեց վարչութեան մի գ և ղ երկու առաջարկութիւնը, այն է, ձեւարանի և թեմական դպրոցներին ձրի ուղարկել ընկերութեան հրատարակութիւններից երկու-երկու օրինակ: Այդպէս ուրեմն նիւթական ապահովութիւն և գրքերի բաւական քանակութիւն ունեցող ձեւարանը և թեմական դպրոցները կը ստանան ձրի գրքեր հայոց ընկերութիւնից, իսկ մեր քաւառական և գիւղական դպրոցներին աղքատ վարժպետները, և աղքատ գրագրանները պէտք է ամիսներ համարեն, թէ երբ կը գայ այն երջանիկ օրը, որ կարելի կը լինի ձեռք բերել մի քանի հատոր գրքեր՝ ուսումնական անհրաժեշտ պէտքերին լիութիւն տալու համար...

Կարծեք ձեւարանում, Ներսիսեան դպրանոցում, Ծուշու, Երևանի, և ուրիշ թեմական դպրոցներում, քիչ վեց մանկներ են զուր տեղը կորչում, որոնցով կարելի էր տասնեակ այլեւս գրքեր առնել, և պահարանների մէջ պինդ կերպով դարսել...: Դարձանակներ: 1885 թվի յունվարի մէկին ընկերութիւնը ունեցել է 3,307 ր. 77 կոպ.: Անդամակցական վճար ստացվել է 186 րուբլի:

Տիկին Լիւդա Թամաշեան իր կազմած թատրոնական ներկայացումից տուել է 277 ր.: Ընկեր-

ութեան հրատարակութիւնների վաճառումից ստացվել է 54 ր. 68 կ., իզմիրեանի կտակածը 1,716 ր. 87 կոպ.: Ծախքը հասած, 1886 թ. յունվարի մէկին մնացել է 2,586 ր. 75 կոպէկ: 1886 թվին տոկոսաբեր թղթերի հետ միասին մուտք եղել է 4,240 րուբլի 2 կոպէկ (առ այժմ 450 ր. ապառիկ է): Սոյն թվին ծախք եղել է 1,573 ր. 24 կոպէկ: Ապա կարգադրեցաւ վարչութեան կողմից պատրաստված նախահաշիւը 1887 թվի համար: Այդ թվին մուտք սպասվում է 1,630 ր.: Ընկերութիւնը, որ այս տարի ունի 27 անդամ, սպասում է և յոյս ունի՝ ի դիմաց վարչութեան՝ որ առաջիկայ թեմական կոնսենսայ քսան և հինգ անդամ: (Գիտամբ թեմական չը գրեցինք 25-ը, որպէս զի ընթերցողը տպագրական սխալ չը համարի այդ): Առաջիկայ թեմական համար ծախք որոշվեցաւ 1,430 րուբլի, որից 1,260 րուբլի գրքեր հրատարակելուն է յատկացրած: Հանելով ծախքը մուտքից, ընկերութեանը կը մնայ 1888 թվի յունվարի մէկին 200 րուբլի:

Մինչև այժմ ընկերութիւնը քարտուղարին տալիս էր տարեկան 300 րուբլի ռոճիկ: Այժմ վարչութիւնը առաջարկում է, և ընդհանուր ժողովը էլ ընդունեց և հաստատեց՝ սրանից յետոյ, քարտուղարութիւնը ընդունել իբրեւ պատու պաշտօն, (ըստ կանոնադրութեան) և միայն տարեկան 120 րուբլի տալ ընկերութեան գրասենյակի գերագրին:

Ընդհանուր ժողովը, ըստ կանոնադրութեան, հրաժարված անդամների տեղ ընտրեց նորերին: Պ. Եսայեան ընտրվեցաւ վարչութեան անդամ, իսկ պ. Վարդապետեան ընտրվեցաւ վարչութեան գանձապահ: Խմբագրական մասնագործի նոր անդամներ ընտրվեցան պ. պ. Ն. Տեր-Ղեւոնդեան, Ջոհրաբեան, Բ. Միրիմանեան և Քիշմիշեան:

Ընկերութիւնը մինչև այժմ հրատարակել է քսան և երկու գիրք:

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Հոկտեմբերի 17-ին

Հոկտեմբերի 12 է, և օրը—կիրակի:
Այդ օրը Պետերբուրգում, Измайловский про-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

III

«Alles wer gesagt, doch
Alles bleibt zu sagen
Göthe»

Մեր «Գաւառական նամակներ» երկու նախընթաց յօդուածները նուիրելով գիւղական կեանքի երկու գլխաւոր տարրերին՝ հողը ու ջրին, մենք, ինչպէս յիշում կը լինի ընթերցողը, շօշափեցինք այդ հարցերը միայն ընդհանրապէս, ցոյց տալով հողային և ջրային հարցերի դրութիւնը Անդրկովկասում, նկարագրելով ժողովրդի դէպի իր այդ դարեր, վաղեմի սեփականութիւնը բոլոր նաբարված իրաւաբանական իրաւունքները և հանրայնօրէն մասնացոյց անելով այն սարսափելի զեղծումների և անիրաւութիւնների վրա, որ տեղի են ունենում գաւառական կեանքի այդ երկու մասերում, կնճռելով, խառնելով այդ հարցերը և մի ահաջին գործեան հանդուց պատրաստելով մեր դատաւորների և մեր բարեմիտ կառավարութեան համար...

«Գաւառական նամակներ»-ի մի շարք առանձին յօդուածներով ընթերցողին Գիւղական կեանքի այդ երկու հարցերի մանրամասնութիւնների հետ ծանօթացնելը մեր պարտաւորութեան վրա

թողնելով, այժմ մենք կը դառնանք դէպի նոյնը՝ նշանաւոր Անդրկովկասում—արօտատեղիներ և նոյն հող հետ սերտ կապ ունեցող—խաշնարածութեան հարցերը:

Հողային հարցը, երկրագործութիւնով հանգերծ, Անդրկովկասի աղքատացեալութեան առաջնակարգ պարագլուխը լինելով, շատ անգամ, այս կամ այն չափով, դարձել է իր վրա հայ մամուլի ու շաղկապի թանց: Բայց արօտատեղիների հարցը և խաշնարածութիւնը—մի պարագլուխը Անդրկովկասում, որ պակաս տեղ չէ բռնում մեր երկրի ժողովրդի անտեսական կեանքում, որքան մեզ յայտնի է, շատ քչերի ուշադրութեանն է արժանացել մինչև այժմ: Եւ մենք շատ ուրախ պէտք է լինենք, որ պետական կառուածների միջոցով ընկերութեան յանձնարարութեամբ Անդրկովկասի պետական գիւղացիների տնտեսական դրութիւնը ուսումնասիրող կոմիտեան այդքան մեծ տեղ նուիրելի ծրագրի մէջ երկրի արօտատեղիները և խաշնարածութեան հարցերին: Անդրկովկասը, երկրագործական—անասնապահական երկրի լինելով, ժողովրդի կեանքի այդ երկու աղբիւրները սերտ կապված են իրար հետ և այդ հարցերի միասեղ ուսումնասիրութիւնից կախված կը լինի նրանց ապագայ կանոնաւորութիւնը: Ամբողջ Անդրկովկասի տարածութիւնը հասնում է մինչև 3000000 զեւսակառն և այդ արօտատեղիները, եյլ աղինք որ ու ղ շ լ ա ղ ն եր են անուանվում, այսինքն ամառվայ և ձմեռվայ արօտատեղիներ, Մի քանակ յօդուածում մենք արդէն աւելի ու-

նեցանք նկատել, որ արօտատեղիների տիրապետութիւնը մեզ մօտ համայնական է: Ամեն մի գիւղական համայնք, կամ մի քանի գիւղեր մի համայնք կազմելով, ունեն իրանց յայտնի արօտատեղին, որի վրա արածում է համայնքի տաւարն ու ոչխարը: Գաշտային, տափարակ տեղերում, ուր գլխաւոր պարագլուխը հողագործութիւնն է, ամեն մի գիւղ, կամ եթէ գիւղերը փոքր են, մի քանիսը, ունեն իրանց ընդհանուր արօտատեղիները, որոնց վրա արածում են նրանց անասունները: Բայց լեռնային երկիրներում, ուր խաշնարածութիւնը կազմում է ժողովրդի գլխաւոր պարագլուխը, արօտատեղիների տիրապետութիւնը թէև նոյնպէս համայնական է, բայց այդպիսի տեղերում ամեն մի գիւղական համայնք մասերի է բաժանվում, 4—10 տնից բաղկացած, և համայնքի ամեն մի մասը ստանում է մի յայտնի արօտատեղի, որոշ, յայտնի սահմաններով: Արօտատեղիների այդ բաժանումը լինում է ամեն մի 8—10 տարէն մէկ անգամ: Մեր երկրի լեռնային մասերի աղքատացեալութիւնը և գլխաւորապէս թուրքերը, որ թարաքեալ մաս են կոչվում, և որ, ինչպէս յայտնի է, միշտ թափառաշրջիկ կեանք են վարում, շատ անգամ, ոչ թի և սրի միջոցով, տանեալ տարիներ շարունակ, տիրում են մի և նոյն արօտատեղին, անխնայաբար օգտվելով նրանից (эксплуатация), թէև, ինչպէս արդէն ասացինք, արօտատեղիների տիրապետութիւնը ամբողջ Անդրկովկասում, համայնական բնաւորութիւն ունի: Արօտատեղիների տիրապետութեան այդ տեսակ սխտեմից առաջա-

СПЕКТ-ի վրա գոյացել էր մի կենտրոն, որը վաղ առաւօտվանից քաղաքի բոլոր մասերից, գրաւում էր ժողովրդի ահագին բազմութիւն:

Ինչպէս լճակի մէջ մի կտոր քար գցելուց յետոյ, նկատում են նրա մակերևոյթի վրա գոյացած համակենտրոնական բաղմամբիւ ալիքներ, որոնցից խիստ մաթեմատիկական ճշտութիւն ունեն միայն ամենափոքրերը, այսինքն կենտրոնից աւելի մօտիկները, և միւսերը, աւելի մեծերը, ստեղծում են աւելի անձիշդ և կոպիտ շրջաններ,—այնպէս էլ քաղաքի յիշած կենտրոնին մօտեցող ժողովրդի հեռուի մասերը ներկայացնում էին աններդաշնակ և անկարգ շարժվող ամբոխներ, որոնք աւելի մօտենալով կենտրոնին, խտվում և կանոնաւորվում էին, գոյացնելով մեղմ, բայց հաստատ կերպով ծածանվող կենտրոնական ալիքներ: Այդ կենտրոնն էր այն, գեղարուեստի կողմից, գեղեցիկ «Յաղթութեան» արձանը, որը հանդուցեալ կայսր Ալեքսանդր II-ի ինիցիատիվով կառուցվեցաւ 1877—78 թեմական պատերազմի յիշատակը յաւերժացնելու համար, այն պատերազմի, որի նպատակն էր սլաւոնական մի քանի ցեղերի օսմանցիների կողմից իշխանութիւնից ազատ կացուցանելու, շնորհելով նրանց ավտօնօմիա:

Գտնվել Պետերբուրգում և ունենալ մի քանի ազատ ժամեր, և ներկայ չը գտնվել այդպիսի մի փառաւոր հանդիսի—համաձայնվեցէք, որ դատապարտելի ծուլութիւն կը լինէր:

Այդ պատճառով ես մի ծանօթիս հետ առաւօտը շտապելի դէպի արձանը, բայց ժողովրդի խտութեան և ոտիկանների խտութեան պատճառով մենք կանգ առինք արձանից մի վերստաշտի հեռաւորութեան վրա, ոչինչ չը տեսնելով, վիթխարի տները մէջտեղ, որոնց պատուհանները և կտուրները տառ առ տառ (буквально) ծածկված էին ամենաբազմաթիւ դէպքերով:

Նոր առաջին կարգում մի քանի մարդիկ առաջ էին հակվում, նրանք շարժունները այն բոլորէին ցօլանում էին ամբողջ ամբոխի վրա, որը ճգնտում էր աւելի մօտենալ հանդիսին և ընդհակառակը, երբ ձիահեծ ոտիկանները մի քանի քայլ էին անում դէպի ժողովուրդը, նրա հոսանքը դադարացնելու համար, այդ ժամանակ ամբողջ աննկատելի կերպով կրկին ալիքովում էր, կատարելով, սակայն, կենտրոնախոյս շարժումներ:

Նուր է նրանց անհաւասար ժողովրդի մէջ բաժանումը և համայնական տիրապետութեան բնաւորութիւնը կորցնելով, տարիների ընթացքում հողը մի և նոյն անձնաւորութեան ձեռքում մնալով իրաւաբանօրէն դառնում է նրա անվիճելի սեփականութիւնը: Մենք դարձեալ կրկնում ենք, որ արօտատեղիների տիրապետութեան այդ տեսակ սխտեմ, որ հիմնված է ուժեղ իրաւունքների վրա միայն (хулачное право), գոյութիւն ունի գլխաւորապէս թուրք թափառաշրջիկների մէջ, որոնք, ինչպէս ասացինք, թարաքեալ մաս են կոչվում:

Մեր երկրի նախկին փոխարքան, ցանկանալով Անդրկովկասի արօտատեղիների հարցը կանոնաւորել, 1870 թեմականին մայիսի 14 մի կանոնադրութիւնով յայտնեց, որ Անդրկովկասի արօտատեղիների տիրապետութեան խնդիրը իր նախկին դրութեամբ կարող է շարունակվել միայն վեց տարի, այդ կանոնադրութեան հրատարակվելու օրից, իսկ յետոյ, տեղական պայմաններին համաձայն, մի պրօէկտ, կանոնադրութիւն կը կազմէ Անդրկովկասի թափառաշրջիկ հասարակութեան հողային հարցը կանոնաւորելու և հողը հաւասարօրէն բաժանելու համար: Բայց շատ ցաւալի է, ի հարկէ, որ այդ պրօէկտը միմիայն մտադրութիւն մնաց և մեր երկրի արօտատեղիների հարցը, ինչպէս և Անդրկովկասի հողային խնդիրը առհասարակ, մի և նոյն դրութեան մէջ մնալով և աւելի բարդելով, կնճռելով, դուցէ տակաւին անլուծելի դառնալ ապագայի համար:

Մենք արդէն ասացինք, որ ոչ թէ և իր առաւելը Անդրկովկասի գաւառական, գիւղական

Ինչն այստեղ առաջին անգամ էր պատահում տեսնել այն սառնարատութիւնը, որով վերաբերվում էր ամբողջը, սովորականին հակառակ, դէպի գեղեցիկ սեռը, տեղ չը տալով նրան առաջին կարգի վրայ հանդիսի ծննդած հետաքրքրութեան չափը. կարծես ամենքը զգում լինէին, որ այդ տեսակ հանդէսներ չատ քիչ են պատահում կեանքում, և կարծես կատարվում լինէր հոգեպետական կոնսէրտ:

Ահա ախտաւոր է մօտենալ դէպի խորը մի քնքշիկ, մարմնից և շարերից անուշահոտութիւն բուրբոշ նորիկ թարմ օրիորդ, լորնէտը կուրծքին կախ, ի հարկէ, համոզված լինելով, որ ահա այս բոլորէն կը ձեռքբերվի ժողովուրդը, և նա, առանց կոպտ աքհետադրելու շփոթութիւն, ազատ կերպով կը լռողայ դէպի առաջ, գրաւելով սակայն իր հետ իր ցիլինդրաւոր, թարմ և ամեն ինչ պատմելու պատրաստ սասկեղին, բայց, հէնց առաջին քայլից, զգալով անյողզող արգելք և կոպտ սառնարատութիւն, կամ զղուեղով ամբողջ պատաս անուշ քրտինքի թթու և անդուրեկան հոտից, լուռ և սաստիկ վերաբերված կերպով չնայաբարիկ արարածը յետ է քաշվում, չը մոռանալով դարձեալ գրաւել իր ետից «տղէտնե՛րի» անքաղաքավարութիւնից յօնքերը կիտած ասպետին և լսելով ամեն կողմից փողոցային երեւանների դէպի նրանց ուղղած սրամտութիւնները: Եւ նա յետ է քաշվում, ընդունելով մի այնպիսի դէպք, որը կարծես արտայայտում լինէր հետեւեալ, երբեմն շատ դուրեկան, յամառութիւնը. «սրանից յետոյ թէկուզ ինքներդ խնդրեցէք, աղաչեցէք, էլ երբեք յետ չեմ դառնայ, յետ չեմ դառնայ, յետ չեմ դառնայ»:

Եւ իսկապէս, ժողովուրդի թթուահոտ քրտինքը անտանելի էր: Երկու ժամ անօգուտ կանգնելուց յետոյ մենք մի կերպ կարողացանք դուրս գալ այդ վանդակից և, ինքնայոժար կերպով վճռեցինք հրաժարել այդ տեսակ հանդէս տեսնելու բաւականութիւնից:

Երբ արդէն աղատ օդ էինք շնչում հեռուում, արթնացանք միշտ սկսեց անցնել զօրախումբը — թեթեւ կազաերիա-ն, արտիլլերիա-ն և, վերջապէս, մեղմնայական քիփոտ-ն, զօրախումբը շարժվեցաւ թաղաւոր կայսրի կամանքով:

Այդ հանգիսի ոյժը, որը պատրաստ էր Նրա հրամանով իրադրոճել անկարելին, իր ներդաշնակութեամբ ակամայ մտաբերեց ինչ Պուշկինին՝

«...Волнуясь конница летит;
Пѣхота тинется за нею,
И тяжкой твердостью своею,
Ея стремленья крѣпить».

Լեւոն Աթաբէկեանց

Կեանքում մի և նոյն բանը լինելով, հոգը առհասարակ և արօտատեղին մասնաւորապէս միշտ մի և նոյն ձեռքում մնալով, ոյժասպառ է լինում և բացի այն որ նրա բերքը տարուց տարի, նրանից անկանոն օգտվելու եղանակից, պակասում է, այլ և ժողովուրդի հարստութիւնը կենտրոնանում է, փոխանակ ապակենտրոնանալու, հաւասար կերպով բաժանվելու երկրի բնակչիների մէջ:

Հողագործութիւնը Անդրկովկասում, նրա վաղեմի, նախապետական դրութեան մէջ, թէն մեր երկրի մեծ մասի բացառիկ պարագմունքն է կազմում, բայց և այնպէս չէ ապահովացնում գիւղացու կեանքը ամբողջապէս և գիւղացին իր ամենաանհրաժեշտ պէտքերը լրացնելու համար երկրագործութեան հետ միասին պարագում է և խաչնարածութեամբ: Արանի (տաթարակ) գիւղերում, բացի այն որ ամեն մի շինական, այս կամ այն չափով, խաչնարած է, դուք կը գտնէք տասնեակ մարդիկ, որոնք իրանց ընտանիքի անդամներին մի քանիսը դաշտում պարագեցնելով, միանեւրին, իրանց տաւարն ու ոչխարով ուղարկում են լեռները. այդ տեսակ մարդիկ պարագում են և տաւարի առևտուրով և չուգար են կոչվում:

Ոչ մի բան այնքան վիճելի չէ գիւղական հասարակութեան մէջ, որքան որ արօտատեղիները: Գիւղական կեանքի ալեկոծումների մեծ մասի պատճառը արօտատեղիների մասին վէճերն են լինում, որ շատ անգամ ահագին կոնֆլիկտներ և միջնա անգամ սպանութիւններ առաջացնելով, վիճողների մէջ մշտական թշնամութիւն են թողնում և այդ թշնամութիւնը տարիների ընթացքում սերունդ անցնելով սարսա-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказ» լրագրում կարդում ենք հետեւեալ: Եկող 1887 թվի օգոստոս ամսին կայանալու է Ռուսաստանի Եւրոպայի քաղաքում ուսաց 7-րդ հնագիտական (արխէօլոգիական) ժողովը: Ժողովի պարագմանց առարկաների թւում նշանակված են ի միջի այլոց հետեւեալ զեկուցումները: 1) Հայոց գեղարուեստի ազդեցութիւնը ուսաց գեղարուեստի վրայ. 2) Երբ կառուցվեցաւ Կոնստանդնուպոլիսը Արաբական ծովի ափերում և ինչից է ծագում այդ քաղաքի անունը:

ՎԵԼԻՍՅԻՆԻՅՑ մեզ հաղորդում են հետեւեալ անցքի մասին: Հնդկութեան 8-ին, մի կատաղի գոմէշ յարձակվում է փողոցում մի օրիորդի վրայ, օրիորդը անմիջապէս կանգնում է մի տան պատի մօտ և երբ գոմէշը ուղում է պոզահարել նրան, օրիորդը բռնում է կատաղի կենդանուն պոզերից և այդպիսով գերի է պահում գոմէշին, մինչև փողոցում անցնողները մեծ բազմութեամբ հաւաքվում են, չըջապատում են օրիորդին և աղաւթում են նրան վառագից: Օրիորդը մնում է անվնաս, բայց ունի գոմէշը այդ դէպքից մի քանի ժամ առաջ արդէն վնաս էր տուել ուրիշ անձանց և իր պոզերով մահացու հարուածներ էր հասցրել երկու կանանց, որոնք փողոցում անցնելիս են եղել:

ԹԻՖԼԻՍԻ մի քանի փողոցներում այս աշնանը, քաղաքային վարչութեան կարգադրութեամբ, ըսկեցին նորոգել քարայտակը և մի քանի տեղ էլ արդէն վերջացրին: Բայց փողոցներից մի քանիսներում, ամբողջ քարայտակը քանդելուց յետոյ, յանկարծակի անձրևների համեմուն պէս, այլ ևս չեն շարունակում սկսած աշխատանքները և փողոցները ներկայացնում են այժմ անցնողի աչքին կատարեալ աւերման մի տիպուր և անախտութեամբ: Այդ դրութեան մէջ է, օրինակ, քաղաքի կենտրոնում, փօստատան մօտ անցնող Բարձուկայա փողոցը. քարայտակը տակն ու վրայ է աւրած, քարերի կոյտերը միմեանց վրայ դրված, եկած անձրևներից լճացած ջրերի տեղեր են դուրս գալիս, և այդ տեղերում ջուրը փռում ու նըրանից զարչանոտութիւններ են բարձրանում: Ինչի համար սկսել են փորփորել, քանդել ամբողջ փողոցը, եթէ յոյս չունէին որ այս աշնանը կարող են վերջացնել քարայտակի նորոգելը. կամ ինչի սկսած աշխատանքները չեն շարունակում այժմ, երբ փողոցը արդէն անանցնելի է դարձել: Միթէ այդ դրութեան մէջ պիտի մնայ փողոցը ամբողջ ձեռք:

ԹԻՖԼԻՍԻ ձիաբարձ երկաթուղու վարչութիւնը, ինչպէս լսել է «Нов. Об.» լրագրից, յայտնել է

փելի վրէժխնդրութեան է փոխվում: Պէտք է գիտենալ, ձ. propos, որ մարդկային կեանքը Անդրկովկասում և զլեւաստակէտ այդ երկրի թրջաքանակ տեղերում, շատ արժան է և մարդասպանութիւնը մի արտակարգ բան չէ համարվում: Մի փողոցի պատմութիւն, որ մենք ընթերցողի թոյլատուութեամբ կը բերենք այստեղ, կը հաստատէ մեր ասածները:

Մի 20—30 տարի սրանից առաջ, մեր երկրի մի անկիւնում, Սուրմալու գաւառում, մի քուրդ գողանում է իր մի դրացի գիւղի քրդից մի այծ: Այժմ տեղը, վերաբերվելով որ մի այլացեղ քուրդ յանդգնել է գողանալ նրա այծը, մի պատհի միջոցում կուր գցելով այժմ գողացողի որդու հետ — սպանում է նրան: Այդ օրվանից այդ սերունդներին մէջ վրէժխնդրութեան է սկսվում և մի որ և է տալը տարվա ընթացքում երկու բանակից, այդ ողորմելի այծի համար, սպանվում է տասն և ութ մարդ: Այդպիսով, ինչպէս տեսնում է ընթերցողը, եթէ մի այժմ մի ահագին կոտորածի պատճառ կարող է լինել, ուրեմն ինչ պէտք է առաջացնէ մի վեճ վարելահողի, արօտատեղիի մասին, որից կախված է գիւղացու ամբողջ ընտանիքի գոյութիւնը....

Գարնան սկզբում, երբ Անդրկովկասի լեռները ու դաշտերը սկսում են կանաչել ու ծաղկել, սկսվում է թարաքեամայի կեանքը — քաղաքի դարաւոր ընտանիքներ, ահագին խմբեր կազմելով, թողնում են զաւրդները և սկսում են աստիճանաբար դիմել դէպի լեռները, դէպի կաղնիքը, աւերելով, փչացնելով և ահ ու սարսափ ձգելով իրանց ճանապարհի վրայ գտնվող խաղաղ երկրագործ հայ շինականի վրայ Այդ թափառաշրջիկ,

իր պատրաստակաւութիւնը նուրբելու 1000 ր. թիֆլիսում կայանալի դիւղատնտեսական ցուցահանդիսի օդոխ:

Այդպէս աղաների ուսու լրագրիներին ամենաճիշդ տեղեկութիւններ կրեւում է, որ շաքարագործութեան հարցը, որ քննվում է միմիտրական մասնաժողովում, մեծ շաքարագործների ցանկացած հետեւեալը չի ունենայ:

Արդարադատութեան միմիտրութիւնը մշակում է պատիժները նոր օրէնք ծածուկ կերպով օղի քաշողներին համար:

Հոկտեմբերի 10-ին, Օդեսայում, հայ նկարիչ Յ. Այվազովսկի, իր պատկերահանդէսի բացման ժամանակ, դառնալով նկարչական դպրոցի աշակերտներին, ի միջի այլոց ասեց հետեւեալը. «Դուք ամենքը սիրում էք գեղարուեստը: Բայց միայն սէրը բաւական չէ, դուք պէտք է ինքներդ քննէք ձեզ, և որչէք թէ արեւոք կարող էք դուք քայլեր անել այդ ասպարիզի վրայ: Մի ոգևորվեք նմանողութեան եռանդով, հետեւեցէք այն ուղիւթեան, որ տանում է դէպի բնութեան ճիշտ պատկերը: Դուք ապրում էք հարաւի գեղեցիկ բնութեան մէջ: Ձեզանից է կախված գեղարուեստի ներկայ դրութիւնը: Մի յուսահատվեք, որ հասարակութիւնը սկզբում սառն է վերաբերվում դէպի ձեզ...»: Այվազովսկու ճառը, «Одескiй Вѣст.»-ի ասելով, մեծ դպարութիւն գործեց:

«Московскiя Вѣдомости» լրագրի մէջ կարդում ենք. «Կարսի բերդում կայ մի ուղղափառ տաճար, որը չինված էր դեռ տասներորդ դարում յոյների ձեռքով: Այդ կարսի թուրքերի ձեռքը անցաւ, այդ ուղղափառ տաճարը մղկիթ դարձրին: Վերջին անգամ, երբ կարսը ընկաւ մեր ձեռքը, այդ մղկիթը իսկոյն դարձվեցաւ ուղղափառ տաճար: 1879 թվին կարսի նահանգապետի նախադրութեամբ մի մասնաժողով կազմվեցաւ, որի նպատակն էր փողեր հանդիսակել և տաճարը նորոգել և զարդարել: 1882 թվին Բարձուկայն հրամանով ամեն տեղ հանգանակութիւն բացվեցաւ այդ նպատակի համար: Հաւաքվեցաւ 30 հազար ռուբլի: Այդ փողերը ծախսվեցան տաճարի զանազան զարդերի համար: Փող այժմ չը կայ, բայց տաճարը դեռ չունի ոչ զանապատան և ոչ զանգակներ, որոնք անհրաժեշտ են ուղղափառ եկեղեցու համար, մասնաւոր միակ ուղղափառ տաճարի համար, որը գտնվում է աղանդաւորների աղօթատեղի, այլապէս եկեղեցիների և թուրքերի մղկիթների մէջ:— Ի հարկէ նոր նուաճած երկրում, այլապիսի ազգաբնակչութեան մէջ ուղղափառութեան շահերը արձագանք կը գտնեն:

Վարչների ժողովուրդը, որ բացառապէս խաչնարածութեամբ է պարագում, իր ոյժի միջոցով սեփականեցնում է իրան լեռների ամենալաւ, ամենախոտակէտ տեղերը, միշտ յափշտակելով գողանալով դրացու սեփականութիւնը և քրէական գործերի մի մեծ կոտորածի պատրաստում: Չը նայելով որ թարաքեամեաների քոչի ժամանակ գաւառական ուստիականութիւնը իր բոլոր ունեցած միջոցները գործ է դնում գաւառը հանդիստ պահելու համար, բայց և այնպէս այդ ժամանակամիջոցում տանեակ մարդիկ սպանվում են, տանեակ արտեր այրվում, փչանում: Ոչ մի կուտուրա, ոչ մի քաղաքացիութիւն, ասում է պրոֆեսոր Վալմարեան, չեն պատաստվում նրանում. նա արհամարհում է ամեն տեսակ բարոյական աշխատանք և առանց յարգանքի է վերաբերվում դէպի ուրիշ սեփականութիւնը. կողոպուտը նրա համար մի տեսակ ասպեւտութիւն է համարվում *):

Ահա այն հասարակութիւնը, որի ձեռքում զբանվում են մեր երկրի արօտատեղիները մեծ մասը:

Պետական արօտատեղիներից օգտվելու համար գիւղացին վճարում է խոշոր անասունների համար զինի 10, իսկ փոքրերի համար մէկ կոպէկ և այդ վճարը սօս աւախ է անուանվում: Գաւառական կեանքի ոչ մի բան կարծեմ այնքան գեղգռումների, խարդախութիւնների ու կաշառակերութեան արդիւր չէ ներկայացնում, ինչպէս արօտատեղիները: Պետական ամեն մի տուրքի վճարում:

*) П. Гамбаровъ, о кочевьяхъ, въ связи съ пастбищными вопросами, Отд. Кавк. Общ. С. X. 83 г. № 9 и 10.

ամբողջ ուսու հասարակութեան բոլոր դասակարգերի կողմից:

Կովկասեան շերամագործութեան հարցը, որը իր ներկայ ընկած դրութեամբ առանձին ուշադրութեան կարօտ է, վերջին ժամանակները, անուշադրութեան չէ տրված և Պետերբուրգում, Պետական կառավարչների միմիտրութեան կողմից: Ինչպէս երևում է մայրաքաղաքների ուսու լրագրիները բերած տեղեկութիւններից, յիշեալ միմիտրութիւնը մտադիր է մի քանի հիմնական փոփոխութիւններ մտցնել Կովկասի շերամագործական գործի մէջ: Միմիտրութիւնը ի հարկէ նշանակութիւն կը տայ այն անձանց, կարծիքներին, որոնք ուղարկված էին մեր կողմերը, շերամագործութեան դրութիւնը ուսումնասիրելու համար: Թէ ինչ նախագծեր է կազմել միմիտրութիւնը, այդ մանրամասնաբար դեռ յայտնի չէ, բայց, ինչպէս երևում է մայրաքաղաքների լրագրիներին տուած տեղեկութիւններից, միմիտրութիւնը կանգնել է այն հիմքի վրայ, որ պէտք է ոչնչացնել շերամագործութեան գործում մասնաւոր ձեռնարկութիւնը, և կառավարութեան հովանաւորութեան տակ վերցնել ամբողջ շերամագործութիւնը: Մեր դեռ մի քանի ժամանակ առաջ, երբ «Մշակի» մէջ արծարծվում էր Անդրկովկասի շերամագործութեան ինչորդը, այն միտքը յայտնեցինք, որ կառավարութեան նպատակը շերամագործութեան ինչորդը լինել և փոխանակ շաղկեցնելու երկրի արդիւնաբերութիւնը, կարող է աւելի թուլացնել նրան, աւելի նեղ դրութեան մէջ գցելով այն հազարաւոր մարդկանց, որոնք շերամագործութեամբ են ապահովում իրանց աղբրուտը: Մեր երկրի շերամագործութեան գործը այնքան քիչ է ուսումնասիրված, որ դժուար է միանգամայն, այժմ, մի շատ կտրական քայլ անել այդ կողմից: Նոյն իսկ երեսուն տարի դուրսի լեռնեցող Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը դեռ շատ քիչ տեղեկութիւն ունի երկրի շերամագործութեան մասին, ուր մնաց որ կարելի լինէր հիմնական նշանակութիւն տալ մի քանի այնպիսի անձանց կարծիքներին, որոնք հիմնված են շատ թեթեւ տեղեկութիւնների վրայ: — Կառավարական բարձր չըջանալով զանազան տեսակ արդիւնաբերութեան վերաբերմամբ լսեցինք և շարունակում են ուշադրութեան առնել նոյն իսկ արդիւնաբերողներին կարծիքները. յայտնի է որ հէնց այժմ մեծ նշանակութիւն է տրվում Ռուսաստանում շաքարագործների ցանկութիւններին, երբ արծարծված է շաքարագործութեան հարցը. յայտնի է որ Բազուկի նախ արդիւնաբերողները բաւական ձայն ունեն նախկին արդիւնաբերութեան խնդրի մէջ, որը նոյնպէս պետական կառավարչների միմիտրութեան ընտանութեան ներքոյ է: Կարծում ենք, որ գործի օգտի

րա, այս կամ այն չափով, մի տեսակ հսկողութիւն, մի տեսակ կոնտրոլ կայ, բայց արօտատեղիները և նրանցից ստացվող եկամուտը ամբողջապէս չիմտանալու տանտէրին, նրա օգնականին և զլեւաստակէտ, սարալախ հաւաքողի խրճի վրայ է:

Այդ խաչնարած տանում է իր ոչնչարը լեռները, գաւառական դիւանատանը նրան տուտակ են տալիս, որի մէջ գրվում է թէ որքան զուլի տաւար պէտք է արածացնէ նա պետական արօտատեղիների վրայ, ուրեմն և այդքան սարալախ պէտք է վճարեն: Բայց եթէ գիւղացին ուղարկում է լեռները, օրինակ 100 ոչխար, նա միայն 20—25 ոչխարի տուտակ է ստանում և տուտակըն էլ չէ տանում հետը, այլ դիւտամբ թողնում է գիւղում, որպէս զի սարալախ հաւաքողը չը կարողանայ բռնել նրա խարդախութիւնը: Բայց բանից դուրս է գալիս որ սարալախը համար էլ շատ ձեռնառու է 100 ոչխարի փոխարէն 20-ի համար տուտակ վերցնելը, որովհետեւ այդ բանը ազատում է նրան որ և իցէ կոնտրոլից: Գալով լեռները սարալախ հաւաքողը սկսում է հաշուել տուտակը, բայց որովհետեւ հաշիւողը գաւառական ուստիականներ են լինում, ուստի նրանք էլ, իրանց կողմից, 100 ոչխարից խաչնարածից միայն 80-ի սարալախ են առնում, սարալախ հաւաքողին 70 ցոյց տալիս, իսկ այս վերջինը, օգտվելով նըրանից որ գիւղացին միայն 20 ոչխարի համար է տուտակ վերցրել, 40—50 ոչխարի սարալախը գցում է իր գրպանը, հաշիւ ներկայացնելով միայն 20-ի համար:

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, Հոկտեմբերի 30-ին, Հայոց դրամատիկական Ակումբի խումբը, կը ներկայացնէ **ԲԵԼԻԶԱՐԻՈՍ**, օղբերգութիւն Հինգ արարուածով:

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին:

ԹՈՅՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էյէկսիթ-Melange. Մազերի արագ և առատ բուսաց ներու համար և նրանց պահպանելու թափուկութեամբ 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ուստիքն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:



Բալզամ—Eugénie. Դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշուկիւն և փափուկութիւն, նոյնպէս և մարմարի-ծնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշա

հոտութեամբ, ն յի պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուստիքն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էրկարակալ լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանուկներ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ուստիքն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոսմէտիկական արդիւնները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պահանջում իրանց մէջ որ և է ֆուտակար նիւթեր:

ԱՐՏՈՆՈՒԹԻՆ ՍՏԱՑԱԾ ՊՈՄԱԴ

Իսկական «Pasta Eugénie», գերադանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անսխալ երկրորդների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտասարակական թարմութիւն և գերեցնելով: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քիմիկոս-գիւղերի նման պոմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պոմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugénie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս Գուտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է՝ Գ. Բ. Վինա կի դեղատան ապրանքների մագազինում, «Լճնոց» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը: 70—100

ՀՅՈՒՄԱՆ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(II. 4857.) 36—50 (Կ)

Ներսիսեան դպրանոցում աւարտած ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՄԱՍՆԱՌՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատանը: 2—5

ԷՄԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՂ

Վաճառում են 80 կոպէկով Թիֆլիսի գրափառականոցները և Երևանում հեղինակը: 2—10

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ գտնվում են պ. Նշան ՊԵՐՊԵՐԵԱՆԻ հետեւեւ հրատարակութիւնները ԱՐԺԱՆԱՑՐԱԾ գնորդ:

1. Սիրանոյշ, գրեց Ս. Տիւրաբ, գինն է 1 ր. 50 կ. Առաջ վաճառվում էր 2 ր. 25 կ.
 2. Սիւ Թափառական Հրէա, 4 հատոր, պատկերազարդ 9 » — » Առաջ վաճառվում էր 12 ր.
 3. Հաշակ արդի հայ մատենագրութեան, Պիպերճեանի, Բ տիպ — » 40 »
 4. Հիւսօ՝ թշուառների երեք հատոր, նորագոյն տիպ 3 » — »
 5. Դիւցադուռը աշխատութեան, պատկերազարդ 1 » 50 »
 6. Փղերիկ տղի մը Յուշակեպը — » 75 »
 7. Մեր երկրաւոր բնակարանը և իւր յորինիչը — » 50 »
 8. Համառոտ Մարմնամարզութիւն — » 75 »
- Արտաքին քաղաքներից ապսպրողները ճանապարհածախքը պիտի վճարեն:
- Նոյն տեղը Տաղապարհան՝ բնական պատմութիւն, հատոր Ա. Կնիդանային Հիւսուածաբանութիւն և մարմնաշինութիւն: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ. և բնախոսութիւն ի պէտս աղջկան երկրորդական վարժարանաց: Ընտիր և ճոխ ապագրութիւն, բազմաթիւ նրբագիր պատկերներով զարդարած: Գիրքը բաղկացած է 24 քառածալ թերթերից, տիպը մազուր է, թուղթը ընտիր: Գինն է 4 ր.: Արտաքին քաղաքներից ապսպրողները ճարապարհածախքերը պէտք է վճարեն մօտաւորապէս 40 կ. 2—5

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻԶ ցանկանում է ՊԱՇՏՈՆ ունենալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատանը: 3—3

Գէորգեան ճեմարանի վկայական ունեցող մի երիտասարդ, ուսուցչի պաշտոն է ուզում ունենալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը: 3—3

ՎԿԱՑԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՈՒՍՈՒՑԻԶ, ցանկանում է ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ պաշտոն ունենալ հայոց դպրոցներում: Գիմել «Մշակի» խմբագրութեանը պայմանները խմբագրատանը: 3—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻԶ, որ ունի Свидѣтельство на звание сельскаго учителя վկայականը, կամենում է հայոց դպրոցներում ՌՈՒՍԱՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԼ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 2—3

ՄԻ ՎԱՐՃՈՒԶԻ, որ աւարտել է Թիֆլիսի Գայեանեան դպրոցը, ՅԱՆԿԱՆՈՒՄ է ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՄԱՍՆԱՌՐ ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ: ՀԱՄԱՐԱՑՆ Է ՆՈՅՆՊԵՍ ՄԵՍԱ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՊԵԼ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ: Հասցէն խմանալ «Մշակի» խմբագրատանը: 5—5

ԽԱՐԿՈՎ ԲԻԲԵԱՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ ԲՈՒՖՖԻ ՕՏԵԼՈՒՄ
ՆՕՄԷՐՆԵՐ ԵՒ ԲԵՍՏՈՐԱՆԸ

ՆՈՐԻՑ ԵՔԵՂ ԿԵՐՊՈՎ ԶԱՐԴԱՐՎԱԾ ԵՆ:

Նոմերները 75 կօպ.—5 րուբլի: Ամենայն յարմարութիւն: Խոհանոցը Մոսկվայի Էրմիտաժ Բեստօրանի հմուտ խոհարարի ձեռքումն է: Բեստօրանում կայ Որբէստրիօն-Մօնտոր:

Տաան օրից աւելի մնացողներին անում են զիջումն (բացի տօնավաճառների միջոցին): Նոմերների գները շատ մատչելի են:

Kharkow. Hôtel Rouff.

1—10

Այս տարուայ օգոստոսի 1-ից բացուեցաւ Թիֆլիսում (Միքայելեան կամուրջի վրա №2 և 30)

ՆՈՐ—ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑ

ԴԱՍԱԿԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԵՏՈՑԲԵՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔՈՎ

Նոր—Գրափառականոցում վաճառվում են ամեն լեզուներով դասական և ընթերցանելի, անկազմ և կազմած գրքեր (հասարակ կազմ 15 կ. իսկ կաշէ կազմ 30 կ.):

Գասական պիտոյքներ՝ տետրեր, քարէտախտակներ, քարտէզներ, մատիտներ, գրիչներ, գրչակոթեր, թանաքամաններ և այլն: Տետրերը և քարէտախտակները լինում են տողած և անտող: Պատուիրողները մեծութեան և փոքրութեան հետ պէտք է որոշեն զմի տեսակները:

Գրափառականոցը ընդունում է ամենայն տեսակ գրքեր՝ կօմիտայով վաճառելու համար: Ամեն տեսակ լրագրի և յայտարարութիւնների ստորագրութիւն (թէ տեղական և թէ Ռուսաստանի), տպագրական և կազմարարական յանձնարարութիւններ և զանազան տեղեկութիւններ գրքերի և դասական պիտոյքների վերաբերութեամբ:

Պատուէրները կատարվում են շուտ և ամենայն ճշգրտութեամբ: Թիֆլիսում տպած գրքերի և դասական պիտոյքների գումարով գնողներին զիջումն է լինում:

Հանապարհածախքը գնողների վրա է:

Պատասխանի համար պէտք է 7 կօպէկանոց փոստի մարկա ուղարկել:

Օտար քաղաքներից դիմում են. Тифлисть, «Новая Книжная Торговля», на Михайловскомъ мосту, №№ 29 и 30.

12—15

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅՏԻՈՒԹԻՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵԼ

ՄԻՇՈՒՆԱՑ

ВЕРНАЯ СМЕРТЬ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔԻ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.:

Հեղուկ բաղաձն ջնեւրի դէմ: Սրուակի գինը, վրձինով միասին 1 րուբլի:

Լուս, ցեց, բոլոր ոչնչացնելու փոշի: Դո- Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է՝ Գ. Բ. Վինա կի դեղատան ապրանքների մագազինում, «Լճնոց» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը: 24—100

ՅՈՐԵՆԻ ԵՒ ԿԵՐՈՍԻՆԻ ՄԿԼԱԴ

Պատիւ ունենը յայտնելու, որ մենք բացած ենք Փօթի քաղաքում, Բիւսն գետի վրա, ցորենի սկզբից, կէրօսին րեզերվուած, և տակաւներ ու ժեստեան կանեւր պատրաստող գործարան Յօրենի սկզբից, որ նոր ու ամուր շինութիւն է երկաթեայ ծածկուղով, բաղկացած է չորս բաժանմունքից, և կարող է զետեղել իր մէջ հարիւր վազօն հացահատիկ: Յիշեալ սկզբը միացրած է մի կողմից Կովկասեան երկաթուղու, և միւս կողմից յիս ծովի նոր բուխտայի հետ, և ունի այնպիսի յարմարութիւններ, որոնք միջոց են տալիս ամենայն տեսակ ապրանքներ ստանալ և յանձնել նաւերին, ըստ որում ծախսն էլ ապրանքը վերափոխելու վրա է ծախս է նստում:

Մեր սկզբը կընդունէ իր մէջ ժամանակաւոր պահելու համար ցորենի և այլ հացահատիկներ ամեն ցանկացողից, վերցնելով մինչև 15 օրվայ համար՝ փութին մէկ կօպէկ, կամ վազօնին 6 րուբլ: Մեր սկզբը յանձն է առնում ստանալ ցանկացողից ցորենի և այլ հացահատիկներ ու վաճառել նրա համար, վերցնելով սկզբից օգտին փութին մէկ կօպէկ, կամ վազօնին 6 րուբլի, ըստ որում ապրանքը սկզբում մինչև 10 օր պահելու համար ոչինչ վճար չէ պահանջվում:

Ցանկացողները վաճառել մեզ իրանց ցորենը կամ ուրիշ հացահատիկներ, պիտի ուղարկեն մեզ իրանց ապրանքի նմուշը (օրրաչիկ), որից յետոյ ապրանքը կը գնահատուի երկու կողմի համաձայնութեամբ:

Մեր նաւթագործարանը ոչինչ արգելք չի լինի ցորենի սկզբին որովհետեւ զետեղված է առանձին շինութեան մէջ և գտնվում է բաւական հեռու ցորենի սկզբից:

Մեր կէրօսին և տակաւներ ու ժեստեանկաներ պատրաստող գործարանը նոյնպէս ունի ամենայն տեսակ յարմարութիւններ: Նա պատրաստում է էթան գինով տակաւներ ու ժեստեանկաներ, և ընդունում է նորոգելու համար հին տակաւներ ու ժեստեանկաներ:

Մենք յանձն ենք առնում կէրօսինը ընդունել ու անել շատ չափաւոր գնով:

Մեր տակաւագործարանը կարող է պատրաստել մեծ քանակութեամբ տակաւներ, իսկ ժեստեանկաներ շինող մեքենաները առ այժմ կը պատրաստեն օրական 1,200 ժեստեանկա, իսկ փոքր ժա մանակից յետ աւելի մեծ քանակութեամբ:

Յօրս ունենը, որ մենք յանձնարարութիւններ կատանանք մեր երկրի վաճառականներից, մենք աշխատելու ենք յարաբերութիւն սկսել արտասահմանեան վաճառատների հետ և բաւականացնել մեր երկրացի վաճառականներին:

Մեզ առանձին պայմաններ առաջարկել կամեցողներին խնդրում ենք նամակով դիմել մեզ հետեւեւ հասցեով:

Поти, Очагаву и Тараеву 6—10

Ներսիսեան դպրանոցը աւարտած ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՅԱՆԿԱՆՈՒՄ է ՈՒՍՈՒՑԻԶ ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԼ հայոց ուսումնարաններում: Հասցէն կարելի է խմանալ «Մշակի» խմբագրատանը: 3—3